

Բուժք ոսկւոյ . . .	76,000,000	Փրանք
» արծաթոյ . . .	3,400,000	»
» կապարոյ . . .	580,000	»
» պղնձոյ . . .	40,400,000	»
» զնկոյ . . .	2,100,000	»
» երկաթոյ . . .	60,000,000	»
» հանքածխոյ . . .	2,000,900	»
ԱՅ . . .	16,800,000	»

Գումարն 171,280,000 Փրանք

Կան լսնոսկւոյ հանքեր ուլ, բայց շատ խեղճ են առ այժմ:

Ռւրեմն Ռուսիոյ բուսական ու կենդանական բերքերն երեսուն անգամ աւելին քան զհանքայինս, և իրեն հարստութեան զխաւոր աղբիւրը անոնց բարգաւաճանաց մէջ է: Երկրագործութեամբ կրնայ կրկնապատկիլ իր հարստութիւնը, բայց առ այդ հասնելու համար հարկ է որ երկրագործական գիտութեան օրէնքներն ընդհանրապէս երկրին մէջ: Ռուսիա ունի այսօր կարգաւորեալ տասը դպրոց երկրագործական ուսմանց, մինչդեռ չորս հինգ անգամ աւելի պէտք էր ունենար, հետեւելով Աւստրիոյ ու Գերմանիոյ օրինակին:

Չ Ա Ն Ա Չ Ա Ն Գ Ի Տ Տ Ե Լ Ի Ք

Արտեստական կարագ. — Առ եզան ճարպը որ դալար ըլլայ ըստ կարեւելոյն, և աւտամուտոր գլանի մը մէջ փշրելէդ ետքը՝ ձգէ ամանի մը մէջ որ բովանդակէ բռնածխատ կաւոյ և դալար քաղրթի կտորանք մանր ջարդած, տարով ամանին և 5 աստիճանի ջերմութիւն, Զերմութեան ազդեցութեամբ ու հալմամբ քաղրթաց՝ ճարպը կը լուծուի իր մաշկեղէն պատեանէն և վեր կու գայ: Այն աստիճան թափէ մեղմով ի մի ամանէ ի միւս աման և թող որ պաղի, և ապա կտաւի մէջ առ:

Այս կերպով ճարպը բուսականապէս մաքրելէդ ետքը, հոսեցուր տակառի մէջ, ուր կը պահուի երկար ժամանակ առանց ապականելու ու դառնանալու, և կրնաս գործածել առանց վնասուելու:

Այս նորարուեստ կարագը ախորժակ համ է և հաւասար սովորական տեսակին գործածելի ի կերակուրս: Գաղղիոյ բժշկութեան Մասնաժողովն քննեց զայն, և գտաւ որ չէր վնասակար առողջութեան:

Անագի վրայ նկարչութիւն. — Պ. Դանիէլ

նոր տեսակ նկարչութիւն մը կ'առջարկէ, այն է փոխանակ փայտի, կտաւի կամ մետաղի վրայ նկարելու, անագի թիթեան վրայ նկարել:

Պատրաստելու համար այն երեսը որ պիտի ընդունի գնկարը, առ ամենանուրբ անագէ թիթեղ մը, և պարզէ զայն հոյելոյ մը կամ ապակւոյ վրայ, սրբակելով նախ ապակւոյն վրայ քիչ մը ջուր, մետաղական թիթեղան ապակւոյն վրայ տարածումը դիւրացնելու համար, Երբ թիթեղան երեսը ամենողորկ ձև մ'առնու, դրոշմէ վրան իւղաներկ պատկերդ, այնպիսի գիւրութեամբ որպէս թէ փայտի կամ կտաւի վրայ ըլլար: Ապա թող նկարը որ չորնայ և ետքը օժէ ջնարակաւ: Եւ երբ վերջընես ապակւոյն վրայէն սնանգի այգ նկարաւ գրեալ թիթեղը, կրնաս փաթութել զայն իբրեւ զկտաւ և տանիլ ուր որ կ'ուզես:

Բայց ջինացիք, կ'ըսէ Պ. Տիւմա, արդէն ի վաղուց կը գործածէին զանագ և ուրիշ մետաղները ի դանագան պէտս, ուստի կրնայ գիտաւ նոր ըլլալ ոչ բոլոր աշխարհի այլ եւրոպիոյ համար միայն: